

թվականի հոկտեմբերի 20-ի դատավճռով Կ. Անտոնյանին մեղավոր է ճանաչել ԼՂՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ու նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում 1(մեկ) տարի 6(վեց) ամիս ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2(երկու) տարի ժամկետով:

Խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին փոփոխվել է և Կ. Անտոնյանը կալանքի է վերցվել դատական նիստերի դահլիճից:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ինչպես տուժողի իրավահաջորդ Հ. Պետրոսյանը, այնպես էլ ամբաստանյալի պաշտպան Ա. Հովսեփյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 2010թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ նշված դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ամբաստանյալի պաշտպան Ա. Հովսեփյանը բերել է վճռաբեկ բողոք, որը ԼՂՀ Գերագույն դատարանի 29.12.2010թ. որոշմամբ վերադարձվել է և սահմանվել ժամկետ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Պաշտպան Ա. Հովսեփյանը 20.01.2011թ. կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը 2011 թվականի հունվարի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Կ. Անտոնյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2010թ. հունիսի 18-ին ժամը 16.30-ի սահմաններում, վարելով իր «ԳԱԶ 31029» մակնիշի 11 ԼՍ 798 պետհամարանիշի ավտոմեքենան, ԼՂՀ Մարտունու շրջանի Սոս գյուղի մոտակայքում, խախտելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանապարհային երթևեկության» կանոնների 2-րդ կետի պահանջները, իրականացնելով մեքենայի ոչ պատշաճ և վտանգավոր կառավարում /այն է՝ մեքենան չի վարել իր ընթացքի ուղղությամբ երթևեկելի ուղեմասով, ձեռնպահ չի մնացել մեքենան հանդիպակած ուղեմաս դուրս բերելուց/, բախվել է հանդիպակած ուղեմասով ընթացող՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ գյուղի բնակիչ Վ. Ապոյանի վարած «ՎԱԶ 2106» մակնիշի, 25 ՍՍ 798 պետհամարանիշի ավտոմեքենային, որի հետևանքով վերջինիս ուղևոր Մ.Պետրոսյանը՝ ստացած ծանր մարմնական վնասվածքներից՝ հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին մահացել է:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանի որոշումն անհիմն է, դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել նյութական իրավունքի նորմերը:

Նշված պնդումը բողոք բերած անձը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անհիմն չի կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում դատարանում հետազոտված ապացույցներին, դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին: Դատարանի կողմից ոչ լրիվությամբ է մեկնաբանվել և կիրառվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածները: Դատարանն անհասկանալի պատճառներով հաշվի չի առել այն հանգամանքը, որ ամբաստանյալն անկեղծորեն զոջացել է կատարածի համար, առաջին անգամ է ենթարկվում քրեական պատասխանատվության, բնութագրվում է դրականորեն, ակտիվորեն մասնակցել է Արցախյան պատերազմին և հանդիսանում է պատերազմի 3-րդ կարգի հաշմանդամ ու

գոհված ազատամարտիկի հայր, կամովին փոխհատուցել է տուժողի կողմից կատարված ծախսերը, չկան պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ:

Բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 7.12.2010թ. որոշումը և ամբաստանյալ Կ. Անտոնյանի նկատմամբ կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջները, սահմանելով մինչև 5(հինգ) տարի ժամկետով փորձաշրջան:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով վերաքննիչ դատարանի որոշումը, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը պետք է մերժել, իսկ դատարանի որոշումը թողնել անփոփոխ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 424-րդ հոդվածի՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝ 1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա. 2) նոր կամ նոր երևան եկած հանգամանքները:

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքով: Բողոքաբերի կարծիքով դատարանները խախտել են արդարության և պատասխանատվության անհատականացման, պատժի նշանակման սկզբունքները սահմանող ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները:

Համաձայն ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

Ըստ ԼՂՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ԼՂՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, այնուամենայնիվ դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանը հանցագործության հանրության համար վտանգավորության բնույթը որոշելու համար պետք է պարզի և հաշվի առնի նաև պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը հանցանքի կատարման պահին:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ԼՂՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ԼՂՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, համաձայն որի՝ պատժի նպատակն է վերականգնել

սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝ ... 2) ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը... 3) առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում. 4) դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին:

Ամբաստանյալ Կ. Անտոնյանի արարքը անգոյշությամբ առաջացրել է մարդու մահ: Հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, դատարանը նրա նկատմամբ նշանակել է նման հանցագործությունների համար նախատեսված առավելագույն (առավել խիստ) պատժից մոտ երեք անգամ փոքր պատիժ: Գերագույն դատարանը գտնում է, որ Կ. Անտոնյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկները հիմնավորված չեն:

Ինչ վերաբերում է ամբաստանյալի հիվանդության մասին բողոքի փաստարկներին, ապա բողոք բերած անձը չի ներկայացրել պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդության մասին որևէ փաստաթուղթ, որի առկայության դեպքում օրենքը սահմանում է պատիժը կրելուց ազատելու այլ ընթացակարգ:

Այսպիսով, առաջին ատյանի դատարանը Կ. Անտոնյանի նկատմամբ պատիժ է նշանակել ԼՂՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, պատասխանատվության անխուսափելիության, արդարության, մարդասիրության, պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահպանմամբ, և վերաքննիչ դատարանն իր որոշմամբ իրավացիորեն դատավճիռը թողել է անփոփոխ: Ուստի Գերագույն դատարանը հիմքեր չի գտնում վերաքննիչ դատարանի որոշումը փոփոխելու կամ բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-440-րդ հոդվածներով, ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց`

1. Ամբաստանյալ Կամո Անտոնյանի պաշտպան Արշակ Հովսեփյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. դեկտեմբերի 7-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ. ՂԱՐԱՅԱՆ